

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան
պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

« 27 » սեպտեմբերի, 2014թ. նիստում _____

Խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

- 1.1 Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի (այսուհետ՝ ԳՊՄԻ) Որակի ապահովման կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) ԳՊՄԻ-ի կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է ՀՀ օրենսդրության և սույն կանոնադրության շրջանակներում:
- 1.2 Կենտրոնը ստեղծվում, վերակազմավորվում կամ նրա գործունեությունը դադարեցվում է ԳՊՄԻ-ի գիտխորհրդի որոշմամբ և ռեկտորի հրամանով:
- 1.3 Կենտրոնի տնօրենը և աշխատակիցները նշանակվում կամ ազատվում են աշխատանքից ռեկտորի հրամանով՝ ըստ գործող աշխատանքային օրենսդրության:
- 1.4 Կրթության որակի ապահովման խնդիրների շրջանակներում Կենտրոնը կարող է հանդես գալ ԳՊՄԻ-ի ղեկավարության անունից:

2. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կենտրոնի նպատակն է.

ապահովել ԳՊՄԻ-ի ուսումնական, գիտահետազոտական և կառավարման գործընթացների որակի վերահսկումը, հաշվետվողականությունը և շարունակական բարելավումը:

2.1 Կենտրոնի խնդիրներն են.

- 2.1.1 խթանել բուհում որակի ապահովման մշակույթի ձևավորումը և արմատավորումը:
- 2.1.2 ստեղծել որակի ապահովման, մշտադիտարկման և բարելավման գործիքակազմ:
- 2.1.3 ապահովել կրթական ծրագրերի ու դրանց իրականացման գործընթացների որակի ապահովման քաղաքականություն և դրան փոխկապակցված ընթացակարգերի ստեղծում ու շարունակական բարելավում:
- 2.1.4 ապահովել կրթության միջազգային և հայաստանյան որակի ապահովման չափորոշիչներին համապատասխան առաջարկությունների, օրինակելի փորձի բացահայտումն ու տարածումը:
- 2.1.5 իրականացնել ինստիտուցիոնալ և կրթական ծրագրերի ինքնագնահատման և վերլուծության կազմակերպում:
- 2.1.6 հավաքագրել, համակարգել և մշակել ԳՊՄԻ-ում կրթության որակի ապահովման համակարգի վերաբերյալ տեղեկատվություն:
- 2.1.7 ապահովել ԳՊՄԻ-ի հաշվետվողականությունը ներքին և արտաքին շահակիցների առջև:

3. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Կենտրոնի գործառույթներն են.

- 3.1 գնահատել կրթական ծառայությունների արդյունավետությունը, իրականացնել ԳՊՄԻ-ի գործունեության վերլուծություն, ներկայացնել ԳՊՄԻ-ի զարգացմանը նպաստող առաջարկություններ,
- 3.2 ԳՊՄԻ-ի ղեկավարությանը ներկայացնել որակի ապահովման առկա վիճակի, դրա առանձին բնութագրիչների, կրթության ցուցանիշների մասին հաշվետվություն,
- 3.3 ծրագրել, համակարգել ինքնագնահատման աշխատանքները և համադրել արդյունքներ,
- 3.4 ապահովել Կենտրոնի գործունեության արդյունքների հաշվետվողականությունը ԳՊՄԻ-ի հանրույթի և հասարակության առջև:

4. ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կենտրոնն աշխատանքներն իրականացնում է հետևյալ ուղղություններով.

- 4.1 կազմակերպչական գործունեություն՝ կրթության որակի ապահովման և մշտադիտարկման գործընթացների կազմակերպում և ներդրում,
- 4.2 կառավարչական գործունեություն՝ ինստիտուտում կրթության որակի ապահովման ուղղությամբ համապատասխան որոշման նախագծերի և մեթոդական ցուցումների մշակում,

- 4.3 վերլուծական գործունեություն՝ ինստիտուտում որակի ապահովման համակարգի արդյունավետության և այլ ՄՈՒՀ-երում ներդրված կրթության որակի ապահովման լավագույն մոդելների վերլուծություն,
- 4.4 մեթոդական գործունեություն՝ կրթության որակի ապահովման ոլորտում պրոֆեսորադասախոսական կազմի և ներքին պատասխանատուների վերապատրաստում,
- 4.5 համակարգող գործունեություն՝ կրթական որակի ապահովման գործընթացի մասնակիցների աշխատանքային խմբերի ձևավորում և դրանց աշխատանքի համակարգում,
- 4.6 խորհրդատվական գործունեություն՝ կառուցվածքային ստորաբաժանումներին որակի ապահովման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,
- 4.7 տեղեկատվական գործունեություն՝ կրթության որակի ապահովման ոլորտում ԳՊՄԻ-ի և Կենտրոնի գործունեության արդյունքների և ձեռքբերումների վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվության տրամադրում,
- 4.8 միջբուհական համագործակցություն՝ որակի ապահովման բնագավառում այլ բուհերի հետ փորձի փոխանակում:

5. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

- 5.1 Կենտրոնի աշխատակազմն է՝
- տնօրեն,
 - գործավար,
 - որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուներ:
- Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուները նշանակվում են Կենտրոնի տնօրենի ներկայացմամբ և ռեկտորի հրամանով:
- 5.2 Որակի ապահովման գործընթացներում կառուցվածքային ստորաբաժանումների ներգրավվածությունն ապահովելու նպատակով Կենտրոնի աշխատանքներին մասնակցում են ամբիոնի պատասխանատուները՝ ղեկանի ներկայացմամբ և Կենտրոնի տնօրենի հաստատմամբ:
- 5.3 Որակի ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավվածությունն ապահովելու նպատակով Կենտրոնի աշխատանքներին մասնակցում են Ուսանողական խորհրդի կողմից ներկայացված մշտական և ժամանակավոր խմբերը և ՈԱ ֆակուլտետային կենտրոնի՝ ամբիոնի կողմից ներկայացվող առանձին կրթական ծրագրերով սովորող ուսանողները:
- 5.4 Անհրաժեշտության դեպքում ԳՊՄԻ-ի գիտխորհրդի որոշմամբ և ռեկտորի հրամանով Կենտրոնի հաստիքացուցակը կարող է փոփոխվել:
- 5.5 Կենտրոնի տնօրենը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով:
- 5.6 Կենտրոնի տնօրենը պատասխանատու է Կենտրոնի առջև դրված խնդիրների լուծման, որակի ապահովման գործառնությունների իրականացման համար: Սույն կանոնադրությունը ուժի մեջ է մտնում հաստատման հաջորդ օրվանից:

ԳՊՄԻ ՈԱ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

